



ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**


Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 11 ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (covid-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» թիվ 1514-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը.

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել տպագրության ներկայացված ուսումնական հետևյալ գրականությունը (21-12-11-01).
 - 1) Կենսաքիմիայի ամբիոնի վարիչ Մ. Ի. Աղաջանովի խմբագրությամբ «Կենսաքիմիա» դասագիրքը,
 - 2) Նորմալ անատոմիայի ամբիոնի վարիչ Կ. Մ. Բարոյանի, Ա. Լ. Զարգարյանի «Մարդու անատոմիա» դասագրքի առաջին մասը,
 - 3) Հյուսվածաբանության ամբիոնի վարիչ Կ.Թ.Սահակյանի, Մ.Ռ.Թաթոյանի, Գ.Լ.Մկրտչյանի հայերեն և ռուսերեն լեզվով «Մասնավոր հյուսվածաբանության»



հիմունքներ» ուսումնամեթոդական ձեռնարկը,

4) Հյուսվածաբանության ամբիոնի վարիչ Կ.Թ.Սահակյանի, Մ.Ռ.Թաթոյանի, Գ.Լ.Մկրտչյանի անգլերեն լեզվով «Histology» ուսումնամեթոդական ձեռնարկը,

5) Ներքին հիվանդությունների (պուլմոնոլոգիա և նեֆրոլոգիա) ամբիոնի վարիչ Ա. Մ. Մինասյանի խմբագրությամբ «Թոքաբանություն» ուսումնական ձեռնարկը՝ էլեկտրոնային տարբերակով,

6) ԼՕՌԻ հիվանդությունների ամբիոնի վարիչ Ա. Կ. Շուքուրյանի, Մ. Խ. Նազարյանի «Ականջանյարդաբանական հետազոտության մեթոդներ» ուսումնական նյութը,

7) «Ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակված ուսումնական և գիտակրթական ուսումնամեթոդական ձեռնարկները՝

ա. «Հետազոտական հմտություններ» Մաս 1՝ երկլեզու գիտակրթական ուսումնամեթոդական ձեռնարկ՝ նախատեսված ասպիրանտների համար.

բ. «Հետազոտական հմտություններ» Մաս 2՝ գիտակրթական ուսումնամեթոդական ձեռնարկը՝ նախատեսված կլինիկական օրդինատորների համար.

գ. «Հետազոտական հմտություններ» Մաս 3՝ գիտակրթական ուսումնամեթոդական ձեռնարկը՝ նախատեսված վերապատրաստվողների համար.

դ. «Հետազոտության հիմունքներ» երկլեզու ուսումնական ձեռնարկ՝ նախատեսված ուսանողների, այդ թվում և մագիստրոսների համար:

2. Հաստատել՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի Գիտական խորհրդի կանոնակարգի փոփոխությունները (կցվում է) (21-12-11-02).

3. Հաստատել՝ «Ուսման վճարի փոխհատուցման մասին կանոնակարգի» փոփոխությունները և լրացումները (կցվում է) (21-12-11-03).

4. Հաստատել՝ «Որակի ապահովման և գնահատման բաժնի կանոնակարգը» (կցվում է) (21-12-11-04).



5. Հաստատել «Բուժհաստատությունների կառավարում» մագիստրոսական ծրագրում ընդգրկված հետևյալ ուսանողների ուսման վարձերի գեղչերը 100%-ով (21-12-11-05)՝

1) Բադալյան Լուսինե Խաչիկի

2) Մարտիրոսյան Ստեփանուկի

6. Հաստատել՝ Հանրային առողջության ֆակուլտետի «Մագիստրոսական թեզի նախապատրաստական փուլ» դասընթացի լրամշակված ուսումնական ծրագիրը և պլանը (կցվում է) (21-12-11-06).

7. Հաստատել՝ Ռազմաբժշկական կրթագիտական կենտրոնի «Աղետների բժշկության ծրագիր անգլալեզու մասնակիցների համար» ծրագիրը (կցվում է) (21-12-11-07).

8. Հաստատել՝ Կարիերայի կենտրոնի «Հաղորդակցության հմտությունները առողջապահության ոլորտում» հաղորդակցության ճկուն հմտությունների (soft skills) փոխանցման ծրագիրը (կցվում է) (21-12-11-08).


9. Հաստատել՝ Օտարերկրացիների նախապատրաստական ուսուցման բաժնի ուսումնական ծրագրերը և պլանները (21-12-11-09).

10. Հաստատել՝ ԵՊԲՀ Քոլեջի ուսումնական պլանները (21-12-11-10).

11. Մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի «Աղետների բժշկություն», «Վերատադրողական բժշկություն» (ռեպրոդուկտիվ), «Անեսթեզիոլոգիա և ինտենսիվ թերապիա», «Ինտենսիվ թերապիա (վերակենդանացում) և «Intensive care medicine» of postdiplomal fellowship training (անգլերեն) պլան-ծրագրերը (21-12-11-11).

12. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝



Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ

